Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 28-06-2024 թ. որոշմամբ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2023 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆ 3
1.3 Պետական գրանցման համարը		222.160.963817
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2017-06-20
1.5 ՀՎՀՀ-ն		02662248
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)91758123
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		http://www.fast.foundation.am
1.8 Էլեկտրոնային փոստը		fast@foundation.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Արմեն Օրուջյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	30	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Հայաստանի գիտական և տեխնոլոգիական զարգացման ապահովման և տեխնոլոգիական արդյունաբերության ստեղծման համար	656,087,508
	Ծառայության մատուցումից եկամուտ	23,220,468
	Ապահովագրական հատուցումներ	101,000.00

Digitally signed by MURADYAN ANUSH 7005951085
Date: 2024.08.06 11:24:42 AMT

8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Հայաստանի գիտական և տեխնոլոգիական զարգացման ապահովման և տեխնոլոգիական արդյունաբերության ստեղծման համար	74,982,512
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
«ԱԲ սերունդ» դպրոցական ծրագիր	87,223,253	
Հետազոտական դրամաշնորհային ծրագիր	192,692,278	
«Բի-Օն» կենսատեխնոլոգիական նախատիպային լաբորատորիա	46,893,730	
Գիտության և տեխնոլոգիաների հրեշտակ ներդրողների ցանց	12,506,111	
Կրթության վերահմաստավորում	15,098,505	
«Հայաստանի էներգետիկ անկախության ճանապարհային քարտեզ» հետազոտական դրամաշնորհային ծրագիր	445,901	
Ադապտացիոն նորարարական կամպուս	7,661,380	
1991 բանակային և նախաբանակային դասընթաց	1,184,206	
«Նորարար կանայք» ծրագիր	450,280	
«Սայնովա» ծրագիր	28,043	
Հեռանկարային լուծումների կենտրոն	185,061	
«Ութնուկ» ծրագիր	807,200	
Գլոբալ Ինովացիոն Ֆորում	920,619	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	1,016,825,958	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	366,096,567	

Նշումներ՝

12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափի գումարի մեջ ներառված է նաև 11,153,124 դրամ տրամադրված փոխառությունը և 23,220,468 դրամ ձեռնարկատիրական գործունեության ծախսը, վարչական ծախսերը կազմել են 605,401,268 դրամ, իսկ 10,954,530 դրամը ծախսվել է նոր ծրագրերի հետազոտման և զարգացման համար: Հաշվետվության 17 կետում պաշտոնական կայքը նշված է http://www.fast.foundation.am, քանի որ հաշվետվության ձևաչափը թույլ չի տալիս առանց .am-ի լրացնել այն:

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ ____35____էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Համախմբված Ֆինանսական հաշվետվություններ և Անկախ աուդիտորի եզրակացություն

Հայաստանի Գիտության և Տեխնոլոգիաների Հիմնադրամ

31 դեկտեմբերի 2023թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորի եզրակացություն	3
Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն	6
Գործունեության մասին համախմբված հաշվետվություն	8
Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն	9
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն	10
Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	12

Անկախ աուդիտորի եզրակացություն

Գրանթ Թորնթոն ՓԲԸ
Երևան Պլազա բիզնես կենտրոն
ՀՀ, ք. Երևան 0015
Գրիգոր Լուսավորչի 9
Հ. + 374 10 50 09 64/61

Grant Thornton CJSC
Yerevan Plaza Business Center
9 Grigor Lusavorich Street,
Yerevan 0015, Republic of Armenia
T + 374 10 50 09 64/61

Հայաստանի Գիտության և Տեխնոլոգիաների Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Գիտության և Տեխնոլոգիաների Հիմնադրամի և նրա դուստր ընկերությունների (միասին՝ Խումբ) համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա գործունեության մասին համախմբված հաշվետվությունը, զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունը, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները տալիս են Խմբի՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների ու համախմբված դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Խմբից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

Խմբի 2022 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համախմբված ֆինանսական հաշվետվություններն աուդիտի են ենթարկվել մեկ այլ աուդիտորի կողմից, որի 2023թ. հունիսի 30-ի եզրակացությունում այդ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ արտահայտվել է չձևափոխված կարծիք:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Խմբի՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Խմբի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Խումբը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Խմբի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն

ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության չարաշահում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Խմբին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
- Ձեռք ենք բերում բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործառնությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի աուդիտի ուղղորդման, ղեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր աուդիտորական կարծիքի համար:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Արմեն Հովհաննիսյան
Տնօրեն

Էմիլ Վասիլյան, FCCA
Առաջադրանքի պատասխանատու

21 մայիսի 2024թ.

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	218,383	191,643
Ոչ նյութական ակտիվներ		2,851	4,151
Հետաձգված հարկային ակտիվներ		1,612	-
		222,846	195,794
Ընթացիկ ակտիվներ			
Որպես ընդհատված գործառնություն դասակարգված օտարման խմբում ներառված ակտիվներ	14	14,761	-
Պաշարներ		3,665	4,079
Դեբիտորական պարտքեր		677	4,628
Կանխավճարներ	5	29,775	7,053
Մնացորդներ բանկերում	6	53,359	322,975
		102,237	338,735
Ընդամենը ակտիվներ		325,083	534,529

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Պարտավորություններ և զուտ ակտիվներ			
Կուտակված արդյունք		26,373	237,610
		26,373	237,610
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարձակալության գծով պարտավորություն	7	74,269	-
Ֆինանսական պարտավորություններ SAFE պայմանագրերից		-	30,008
Սեփական օգտագործման ֆոնդեր	8	102,741	164,620
		177,010	194,628
Ընթացիկ պարտավորություններ			
Որպես ընդհատված գործառնություն դասակարգված օտարման խմբում ներառված պարտականություններ	14	33,292	-
Սահմանափակ օգտագործման ֆոնդեր	9	1,733	5,010
Սեփական օգտագործման ֆոնդերի ընթացիկ մաս	8	34,507	30,739
Վարձակալության գծով պարտավորություն	7	18,672	-
Կրեդիտորական պարտքեր և պահուստներ	10	33,496	66,542
		121,700	102,291
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		325,083	534,529

Համախմբված Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2024թ. մայիսի 20-ին:

Արմեն Օրուջյան
Գլխավոր գործադիր տնօրեն

Արմինե Սահակյան
Հաշվապահական ընկերության ներկայացուցիչ

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Գործունեության մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտ սահմանափակ օգտագործման ֆոնդերից	9	8,458	13,855
Եկամուտ անսահմանափակ օգտագործման ֆոնդերից	9	707,790	895,782
Եկամուտ սեփական օգտագործման ֆոնդերից	8	71,111	86,456
Այլ եկամուտ		22,617	87,285
Վարչական ծախսեր	11	(372,113)	(361,695)
Ծրագրային ծախսեր	12	(420,879)	(501,873)
Հանգանակությունների գծով ծախսեր	13	(219,185)	(208,500)
Այլ գործառնական ծախսեր		-	(7,275)
Գործառնական շահույթ/(վնաս)		(202,201)	4,035
Տոկոսային ծախս		(12,135)	(3,990)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)		925	(11,606)
Վնաս մինչև հարկերը		(213,411)	(11,561)
Շահութահարկի գծով փոխհատուցում		1,612	-
Տարվա վնասը շարունակական գործառնություններից		(211,799)	(11,561)
Տարվա շահույթը ընդհատված գործառնություններից	14	562	-
Տարվա վնաս		(211,237)	(11,561)

Գործունեության մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Կուտակված արդյունք
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	249,171
Տարվա վնաս	(11,561)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	237,610
Տարվա վնաս	(211,237)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	26,373

Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Շնորհներից և նվիրատվություններից մուտքեր		730,983	943,623
Ծառայությունների մատուցումից մուտքեր		23,220	84,976
Տրամադրված նվիրատվություններ		(150,238)	(47,647)
Վճարումներ աշխատակիցներին և ծառայություն մատուցողներին		(677,728)	(811,465)
Վճարված հարկեր, բացի շահութահարկից		(119,588)	(85,170)
Այլ ծախսեր		(5,217)	-
Ընդհատված գործառնությունների զծով գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ	14	2,619	-
Գործառնական գործունեությունից ստացված/ (գործունեության համար օգտագործված) զուտ դրամական միջոցներ		(195,949)	84,317
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Հիմնական միջոցների ձեռքբերում		(34,269)	(48,925)
Ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(16)	(1,772)
Կարճաժամկետ ավանդներում ներդրում		-	(60,684)
Կարճաժամկետ ավանդների մարում		-	59,231
Ընդհատված գործառնությունների զծով ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ	14	(10,285)	-
Ներդրումային գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		(44,570)	(52,150)

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն (շարունակություն)

Հազար դրամ	Ծանոթ.	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Վարձակալության գծով պարտավորությունների դիմաց վճարումներ		(23,835)	(11,642)
Ֆինանսավորման գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ		(23,835)	(11,642)
Դրամարկղում և բանկերում մնացորդների զուտ աճ/(նվազում)		(264,354)	20,525
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա		830	(11,401)
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա սկզբում		322,975	313,851
Դրամարկղում և բանկերում մնացորդներ տարվա վերջում		59,451	322,975
Օտարման խմբում ներառված դրամարկղում և բանկերում մնացորդներ	14	(6,092)	-
Դրամարկղում և բանկերում մնացորդներ շարունակվող գործառնություններից		53,359	322,975

Դրամական միջոցների հոսքերի մասին [համախմբված] հաշվետվությունը պետք է ընթերցվի այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 12-ից մինչև 35-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամը («Հիմնադրամ») Խմբի մայր ընկերությունն է: Այն հիմնադրվել է Հայաստանի Հանրապետությունում 2017թ. հունիսի 20-ին՝ որպես շահույթ չհետապնդող կազմակերպություն և ստեղծվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Խմբի հիմնադիրներն են.

- ՌՎՎԶ հիմնադրամ;
- ԱՅԲ կրթական հիմնադրամ;
- Արթուր Ալավերդյան;
- «Լույս» մշակութային, գիտական, կրթական հիմնադրամ;
- Նուբար Աֆեյան Բողոսի

Խորհուրդը բաղկացած է 4 անդամից: Խմբի աշխատակիցների միջին թվաքանակը 2023թ. կազմել է 32 մարդ (2022 թ.՝ 27 մարդ):

Հիմնադրամի հարթակ է տրամադրում Հայաստանում և նրա սահմաններից դուրս տեխնոլոգիական և գիտական առաջընթաց ապահովելու համար: Հիմնադրամը նպատակ ունի վերակենդանացնել Հայաստանի հզոր գիտական, տեխնոլոգիական, ինժեներական և մաթեմատիկական ավանդույթները, ստեղծելով նպաստավոր նորարար միջավայր, խթանելով գիտության և տեխնոլոգիաների ոլորտում կրթության զարգացումը, ինչպես նաև ակտիվորեն զարգացնելով վենչուրային կապիտալի էկոհամակարգը: Հիմնադրամի առաջնային խնդիրներից է ներգրավել տեխնոլոգիական և գիտական համայնքներին՝ Հայաստանի վարկանիշը՝ որպես տեխնոլոգիական և գիտական հայտնագործությունների հանգույց բարձրացնելու համար:

Հիմնադրամի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0033, Հակոբ Հակոբյան փող., 3 շենք:

2020թ. հոկտեմբերի 30-ին Հիմնադրամը հիմնադրել է Ըդվանսդ Սոլուշնս Սենտր ՓԲԸ-ն («դուստր ձեռնարկություն») և ունի 100% սեփականության իրավունք: Դուստր ձեռնարկությունը վենչուրային ընկերություն է: Դուստր ձեռնարկության հիմնական գործունեության մեջ է մտնում ծառայությունների մատուցումը, ապրանքների օտարումը, արհեստական բանականության, տվյալագիտության, հաշվողական վարքագծային հետազոտության, կենսագիտության, նորարար մեթոդների և ռոբոտաշինության ոլորտներում հետազոտություններ կատարելը: Դուստր ձեռնարկությանն ամբողջությամբ պատկանում է Դենովո Սայենսիս ՓԲԸ-ն, որը ստարտափ ընկերություն է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում գործող:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները 2023թ. դեկտեմբերի 31-ի և 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ներառում են հետևյալ դուստր ձեռնարկությունները.

31 դեկտեմբերի 2023թ. Դուստր ընկերություն	Մասնաբաժին %	Գրանցման երկիր	Գրանցման ամսաթիվ	Գործունեության ոլորտ	Ձեռքբերման ամսաթիվ
Ընվանսդ Սոլուշնս Սենտր ՓԲԸ	100%	Հայաստան	2020թ. հոկտեմբերի 30	Վենչուրային ընկերություն	2020թ. հոկտեմբերի 30
Դենովո Սայենսիս ՓԲԸ	100%	Հայաստան	2020թ. նոյեմբերի 18	SS ստարտափ	2020թ. նոյեմբերի 18

Հաշվետու տարվա ընթացքում հոգաբարձուների խորհուրդը որոշել է առանց իրավահաջորդի լուծարել Ընվանսդ Սոլուշնս Սենտր՝ ՓԲԸ և Դենովո Սայենսիս ՓԲԸ դուստր ընկերությունները: Արդյունքում, դուստր ընկերություններն այս ֆինանսական հաշվետվությունում արտացոլված են որպես ընդհատված գործառնություններ:

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Իրավիճակն Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյունքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:

2023թ. Հայաստանի Հանրապետությունում քաղաքական իրավիճակը շարունակում է մնալ համեմատաբար անկայուն, 44-օրյա Արցախյան պատերազմի հետևանքները դեռևս էական ազդեցություն են ունենում երկրի ընդհանուր տնտեսության վրա: 2023թ. սեպտեմբերին շուրջ 120,000 Արցախաբնակ հայերի բռնի տեղահանումը դեպի Հայաստան լրացուցիչ տնտեսական և քաղաքական ցնցումների առիթ հանդիսացավ: Քաղաքական անկայուն իրավիճակի, միջազգային ճանապարհների պարբերաբար փակման, հրադադարի ռեժիմի կարճաժամկետ խախտումների հետևանքով, դժվար է հստակ կանխատեսել նշված պայմանների տնտեսական ազդեցությունը Խմբի գործունեության վրա:

2022թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում բռնկված հակամարտությունն արագությամբ ծավալվում է՝ զգալի ազդեցություն թողնելով աշխարհի վրա: ԱՄՆ-ն և եվրոպական երկրները կոշտ պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի Դաշնության դեմ: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի Հանրապետության էական առևտրատնտեսական գործընկերն է, ուստի սույն ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև դրանց ընդարձակումը կարող են լուրջ ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների և ամբողջ տնտեսության վրա: Համաշխարհային մակարդակով ավելի խոր պատժամիջոցներ կիրառելը կարող է հանգեցնել բարձր գնաճի, ֆինանսական շուկաների աճի տեմպի նվազման և որոշակի խաթարման:

Ուկրաինայում բռնկված հակամարտությունը պատճառ դարձավ, որ հազարավոր ռուսներ և ուկրաինացիներ տեղափոխվեն Հայաստանի Հանրապետություն: Սա վերաբերում է ոչ միայն

անհատներին, այլ նաև ձեռնարկություններին, որոնք հիմնադրվել և իրենց գործունեությունը ծավալել են այդ երկրներում: Դա հանգեցրեց հայկական շուկա արտարժույթի ներհոսքի ավելացմանը, ինչի հետևանքով հայկական դրամը զգալի արժևորվեց ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ: Մյուս կողմից, ՀՀ կենտրոնական բանկը ոչ մի միջոց չձեռնարկեց, որպեսզի թուլացնի հայկական ազգային արժույթի դիրքերը: Հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում նկատվել է փոխարժեքի կայունություն, հետևաբար ղեկավարությունը չի ակնկալում, որ ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ հայկական դրամի հետագա արժեւորում կլինի: Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում տնտեսական և քաղաքական գործոնները, ինչպես նաև Ուկրաինայում շարունակվող հակամարտությունը կարող են բացասական ազդեցություն ունենալ Խմբի ֆինանսական կայունության վրա, որի ամբողջական հետևանքները այս պահին դժվար է կանխատեսել:

Ղեկավարությունը վերանայել է այս հանգամանքների ազդեցությունը Խմբի անընդհատ գործելու կարողության վրա և եկել է այն եզրակացության, որ Խմբի կողմից իրականացվող ծրագրերի ֆինանսավորումը հիմնականում գալիս է ԱՄՆ-ից, ծրագրերը կրում են շարունակական բնույթ և ուղղված են ապագա տեխնոլոգիաներին և դրանց ներդրմանը Հայաստանի կրթական համակարգում, ուստի վերը նշված ազդեցությունը ընթացիկ ֆինանսական հաշվետվությունների վրա էական չի համարվում:

Ղեկավարությունը գտնում է, որ վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն չունենալ Խմբի ակտիվների գնահատման կամ անընդհատ գործելու կարողությա վրա: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Խմբի գործունեության վրա կարող են տարբերվել իրական արդյունքներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Խմբի գործունեության վրա:

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Համախմբված Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից: Հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Խումբն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով:

2.2 Չափման հիմքեր

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Խմբի գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Խմբի գործարքների տնտեսական բովանդակությունը:

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով (եթե այլ բան նշված չէ), քանի որ, ղեկավարության համոզմամբ, այս արժույթն առավել օգտակար է Խմբի ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար:

Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը:

2.4 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՖՀՄՍ-ներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որ Խմբի ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա: Չնայած ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության կողմից ներկա ցուցանիշների վերաբերյալ տեղեկացված լինելու վրա, այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Հետևաբար, կատարված ենթադրությունները և դատողությունները համապատասխանաբար կճշգրտվեն այն տարում, որում պայմանները կփոխվեն:

2.5 Նոր և վերանայված ստանդարտների ընդունում

Ընթացիկ տարում Խումբն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2023թ. հունվարի 1-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Նշված փոփոխությունների բնույթը և ազդեցությունը բացահայտված են ստորև:

Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք կիրառելի են 2023թ. հունվարի 1-ից և դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2023թ., որևէ էական ազդեցություն չեն ունեցել Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ստանդարտ	Ստանդարտի կամ մեկնաբանության անունը	
ՖՀՄՍ 17	*Փոփոխություններ Ապահովագրական պայմանագրերում ՖՀՄՍ 17, ներառյալ ՖՀՄՍ 9-ի կիրառումից ժամանակավոր ազատման երկարաձգումը (ՖՀՄՍ 4 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 12	*Մեկ գործարքից առաջացող ակտիվներին և պարտավորություններին վերաբերող հետաձգված հարկ (ՀՀՄՍ 12 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*
ՖՀՄՍ 17	*ՖՀՄՍ 17-ի և ՖՀՄՍ 9-ի սկզբնական կիրառում – Համեմատական տեղեկատվություն (ՖՀՄՍ 17 փոփոխություն)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 8	*Հաշվապահական հաշվառման գնահատումների սահմանում(ՀՀՄՍ 8 փոփոխություններ)*	*1 հունվարի 2023թ.*
ՀՀՄՍ 1	*Հաշվապահական հաշվառման քաղաքականության բացահայտում*	*1 հունվարի 2023թ.*

	(ՀՀՄՍ 1 և ՖՀՄՍ Գործնական կիրառություն 2)	
ՀՀՄՍ 12	Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 կանոններ (ՀՀՄՍ 12 փոփոխություն)	*1 հունվարի 2023թ*
ՖՀՄՍ ՓՄՁ-ների համար	Միջազգային հարկային բարեփոխումներ – Pillar 2 մոդելային կանոններ (ՖՀՄՍ ստանդարտի փոփոխություն ՓՄՁ-ների համար)	*1 հունվարի 2023թ*

Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից

Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Խմբի կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

Ղեկավարության կանխատեսմամբ այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունենա Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

Ստանդարտ	**Ստանդարտի կամ մեկնաբանության անունը**	**Տվյալ ամսաթվին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար կիրառելի**
ՀՀՄՍ 1	*Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ (ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՖՀՄՍ 16	*Վարձակալության պարտավորություն Վաճառքի և հետադարձ վարձակալության գործարքի ժամանակ (ՀՀՄՍ 16 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 1	*Ոչ-ընթացիկ պարտավորություններ պայմանագրերի հետ* *(ՀՀՄՍ 1 փոփոխություն)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7	*Մատակարարների ֆինանսական պայմանավորվածություններ (ՀՀՄՍ 7 և ՖՀՄՍ 7 փոփոխություններ)*	*1 հունվարի 2024թ.*
ՀՀՄՍ 21	*Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21 փոփոխություն)*	*1 հունվարի 2025թ.*

3 Հաշվապահական հաշվառման էական քաղաքականություն

3.1 Համախմբման հիմքերը

Խմբի ֆինանսական հաշվետվությունները համախմբում են մայր ընկերության և դուստր ընկերությունների՝ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական հաշվետվությունները: Բոլոր դուստր ընկերությունների հաշվետու ամսաթիվը դեկտեմբերի 31-ն է:

Համախմբման ժամանակ Խմբի ընկերությունների միջև բոլոր գործարքները և մնացորդները բացառվում են, ներառյալ Խմբի ընկերությունների միջև գործարքների արդյունքում չվաստակած օգուտները և չկրած վնասները: Երբ ակտիվի ներխմբային վաճառքից առաջացող չկրած վնասը համախմբման ժամանակ հակադարձվում է, հիմքում ընկած ակտիվը նաև ենթարկվում է արժեզրկվածության գծով ստուգման՝ Խմբի տեսանկյունից: Դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարները, ըստ անհրաժեշտության ճշգրտվել են Խմբի կողմից որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխանելու համար:

Տարվա ընթացքում ձեռք բերած կամ օտարած դուստր ընկերությունների շահույթը կամ վնասը և այլ համապարփակ արդյունքը ճանաչվում են ձեռքբերման ամսաթվից կամ մինչև օտարման ամսաթիվը, որը կիրառելի է:

Խումբը դուստր ընկերությունների ընդհանուր համախառն եկամուտը կամ վնասը բաշխում է մայր ընկերության սեփականատերերի և չվերահսկող բաժնեմասերի միջև՝ առաջնորդվելով սեփականության համապատասխան բաժնեմասով:

3.2 Բիզնեսի միավորումներ

Բիզնես միավորումների հաշվառման ժամանակ Խումբը կիրառում է գնման մեթոդը: Դուստր ընկերության նկատմամբ վերահսկողություն ձեռք բերելու համար փոխանցված հատուցումը հաշվառվում է որպես փոխանցված ակտիվների, առաջացած պարտավորությունների և Խմբի թողարկած սեփական կապիտալի բաժնեմասերի՝ ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրական արժեքների հանրագումար, որը ներառում է պայմանական հատուցման համաձայնությունից առաջացող ցանկացած ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը: Ձեռք բերման ծախսերը ծախսագրվում են տեղի ունենալուն զուգընթաց:

Ձեռք բերված ակտիվները և ստանձնած պարտավորությունները սովորաբար չափվում են ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրենց իրական արժեքով:

3.3 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Համախմբված Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Խմբի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ-ի կողմից հրապարակված փոխարժեքը. 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 404.79 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 447.90 ՀՀ դրամ (2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 1 ԱՄՆ դոլարը կազմում էր 393.57 ՀՀ դրամ, 1 եվրոն՝ 420.06 ՀՀ դրամ): Ոչ դրամային հոդվածները չեն վերահաշվարկվում և չափվում են պատմական արժեքով (հաշվարկվում են՝ օգտագործելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը:

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.4 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման, և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հիմնական միջոցի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Մեքենաներ և սարքավորումներ	-	5-8 տարի
Տրանսպորտային միջոցներ	-	10 տարի
Գրասենյակային սարքավորումներ	-	5-8 տարի
Այլ	-	5-8 տարի:
Վարձակալություն	-	ավելի կարճ օգտակար ծառայության ժամկետ և հիմնական վարձակալության ժամկետ

Ակտիվների մնացորդային արժեքները, օգտակար ծառայության ժամկետները և մաշվածության մեթոդները վերանայվում և ճշգրտվում են, յուրաքանչյուր ֆինանսական տարում համապատասխանաբար:

Պահպանման և վերանորոգման հետ կապված ծախսերը ճանաչվում են, երբ դրանք կատարվում են և ներառվում են այլ ծախսերում, եթե ենթակա չեն կապիտալացման:

Հիմնական միջոցի միավորը ապաճանաչվում է օտարումից կամ երբ դրա օգտագործումից կամ օտարումից ապագա տնտեսական օգուտներ չեն ակնկալվում: Ակտիվի ապաճանաչումից առաջացած շահույթը կամ վնասը ներառվում է եկամուտում կամ ծախսում, այն տարում որում ակտիվը ապաճանաչվում է:

3.5 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Խմբի կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում կամ ավելացվում է այլ ակտիվի սկզբնական արժեքին՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, որը կազմում է 1-5 տարի:

Ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության ժամկետը հաշվարկվում է այն պահից, երբ ակտիվը պատրաստ է դառնում օգտագործման: Ամորտիզացիան ավարտվում է ավելի շուտ, եթե ոչ նյութական ակտիվը դասակարգվում է վաճառքի համար պահվող կամ եթե ակտիվը ապաճանաչվում է:

3.6 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ

Խումբը ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվները վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների արժեքը ներառում է վարձակալության գծով ճանաչված պարտավորությունների գումարը, կատարված սկզբնական ուղղակի ծախսումները և վարձակալության գծով վճարումները, որոնք կատարվել են մեկնարկի ամսաթվի դրությամբ կամ դրանից առաջ՝ հանած վարձակալության վճարները: Եթե Խումբը համոզված չէ, վարձակալված ակտիվի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու հարցում, ապա օգտագործման իրավունքի ձևով ճանաչված ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդով՝ դրանց գնահատված օգտակար ծառայության և վարձակալության ժամկետից ավելի կարճ ժամանակահատվածում: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները ենթակա են արժեզրկման:

Վարձակալության գծով պարտավորություն

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Խումբն իր ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվը և վարձակալության գծով պարտավորությունը: Վարձակալության գծով վարձավճարները ներառում են հաստատուն վճարումներ՝ հանած վարձակալության ստացվելիք վճարները, վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից, գումարներ, որոնք, ինչպես սպասվում է կվճարվեն մնացորդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձակալության գծով վարձավճարները ներառում են նաև գնման օպցիոնի իրագործման գինը, եթե Ընկերությունը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ օպիցոնը, ինչպես նաև վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքները, եթե ընկերությունը խելամտորեն համոզված չէ, որ վաղաժամ չի դադարեցնի վարձակալությունը: Վարձակալության գծով փոփոխուն վճարումները, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքից, ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, երբ տեղի է ունենում վճարման պատճառ հանդիսացող իրադարձությունը կամ պայմանը:

Մեկնարկի ամսաթվին Խումբը չափում է վարձակալության գծով պարտավորությունն այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ կիրառելով վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը, եթե այդ դրույքը կարելի է հեշտությամբ որոշել:

Վարձակալության գծով վարձավճարների ներկա արժեքը հաշվարկելիս Խումբը օգտագործում է փոխառության տոկոսադրույքը վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, եթե վարձակալության մեջ նշված տոկոսադրույքը հեշտությամբ որոշել հնարավոր չէ: Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալության գծով պարտավորությունը կնվազեցվի վարձակալության գծով վճարումների չափով և կմեծացվի օգտագործման իրավունքի ձևով ակտիվների չափով: Ի լրումն, վարձակալության գծով պարտավորությունների հաշվեկշռային արժեքը վերաչափվում է՝ արտացոլելու վարձակալության ժամկետի փոփոխություն, բովանդակության փոփոխություն, հաստատուն վճարումների կամ հիմքում ընկած ակտիվի ձեռքբերման գծով գնահատման փոփոխություն:

3.7 Պաշարներ

Պաշարներն այն ակտիվներն են, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար, կամ հումքի, կամ նյութի ձևով՝ արտադրանքի թողարկման

կամ ծառայությունների մատուցման ընթացքում օգտագործելու համար: Պահեստամասերը, վթարային սարքավորումները և օժանդակ սարքավորումները նույնպես ճանաչվում են որպես պաշար, եթե դրանք չեն համապատասխանում հիմնական միջոցների սահմանմանը:

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը հաշվարկվում է՝ օգտագործելով [առաջին մուտք՝ առաջին ելք (ԱՄԱԵ) մեթոդը, և ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:

3.8 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Խումբը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվներն ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգումը և սկզբնական չափումը

Բոլոր ֆինանսական ակտիվները սկզբնապես չափվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, բացառությամբ այն առևտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ և չափվում են գործարքի գնով՝ ՖՀՄՍ 15-ի պահանջներին համապատասխան:

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ամորտիզացված արժեքով հաշվառվող,
- իրական արժեքով չափվող՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- իրական արժեքով չափվող՝ այլ համապարփակ արդյունքի միջոցով:

Դասակարգումը բնորոշվում է հետևյալ երկու պարագայով.

- Խմբի՝ ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելը,
- ֆինանսական ակտիվի՝ պայմանագրային դրամական հոսքերի հատկանիշները:

Խմբի ֆինանսական ակտիվները, ըստ կատեգորիաների ներկայացված են ծանոթագրություն 16.2-ում:

Ֆինանսական ակտիվների հետագա չափումը

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով, եթե ակտիվները բավարարում են հետևյալ պայմաններին

- դրանք պահվում են այն բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է պահել ֆինանսական ակտիվները և հավաքագրել դրանց հետ կապված պայմանագրային դրամական հոսքերը,
- ֆինանսական ակտիվների պայմանագրային պայմաններն առաջացնում են դրամական հոսքեր, որոնք հանդիսանում են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներ:

Սկզբնական ճանաչումից հետո այս ակտիվները չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ֆինանսական գործիքների այս կատեգորիայում են դասակարգվում Խմբի դրամական միջոցները և դրանց համարժեքները, առևտրային դեբիտորական պարտքերը և այլ դեբիտորական պարտքերի մեծամասնությունը:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը

Խմբի ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը: Խմբի ֆինանսական պարտավորությունները, ըստ կատեգորիաների, ներկայացված են ծանոթագրություն 16.2-ում:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

3.9 Զուտ ակտիվներ

Խմբի զուտ ակտիվները ենթակա չեն բաշխման հիմնադիրների միջև ոչ սովորական գործունեության ընթացքում և ոչ էլ լուծարման ժամանակ:

Կուտակված արդյունքը ներառում է բոլոր ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների չբաշխված շահույթը:

3.10 Շնորհներ և նվիրատվություններ

Շնորհը ստացվում է հատուկ նպատակով և ենթակա չէ Խմբի կողմից ընդհանուր նպատակների օգտագործման համար: Շնորհը չի ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Խումբը կատարելու է դրան կից բոլոր պայմանները, և որ շնորհը ստացվելու է:

Շնորհները, որոնց հիմնական պայմանը Խմբի կողմից ոչ ընթացիկ ակտիվներ գնելը, կառուցելը կամ այլ կերպ ձեռք բերելն է, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես սեփական օգտագործման ֆոնդեր և սիստեմատիկորեն փոխանցվում են շահույթ կամ վնաս՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Այլ շնորհները ճանաչվում են սիստեմատիկ հիմունքով եկամուտ այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք փոխհատուցում են համապատասխան ծախսումները, որոնց համար դրանք ստացվել են: Շնորհը, որը հատկացվում է Խմբին՝ ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների՝ առանց հետագա համապատասխան ծախսումներ կրելու, ճանաչվում է որպես շահույթ կամ վնաս այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ դառնում է ստացման ենթակա:

Անսահմանափակ նվիրատվությունները հասանելի են ընդհանուր նպատակների համար, ինչպես սահմանված է Հիմնադրամի կառավարման փաստաթղթերում: Հետևաբար, անսահմանափակ միջոց ճանաչված նվիրատվությունները ճանաչվում են որպես հասույթ, երբ դառնում են ստացման ենթակա:

3.11 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ո՛չ հաշվապահական շահույթի, ո՛չ էլ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

3.12 Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները,

Երբ աշխատակիցները հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Խմբին մատուցում են ծառայություններ, Խումբն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների չզեղչված գումարը, որն ակնկալվում է վճարել այդ ծառայությունների դիմաց, ճանաչում է՝

(ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված ցանկացած գումար հանելուց հետո: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների չզեղչված գումարը, Խումբը պետք է ճանաչի այդ տարբերությունը որպես ակտիվ (կանխավճարված ծախս)՝ այն չափով, որով կանխավճարը կհանգեցնի ապագա վճարումների կրճատման կամ դրամական միջոցների վերադարձի,

(բ) որպես ծախս, եթե գումարը չի ներառվել այլ ակտիվի արժեքի մեջ:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Խումբն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Խումբը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի:

3.13 Հասույթ

Հասույթը ձևավորվում է հաճախորդներին ապրանքների և ծառայությունների փոխանցումից: Ճանաչված գումարը այն գումարն է, որը կազմակերպությունն ակնկալում է ստանալ փոխանցված ապրանքների և ծառայությունների դիմաց:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Խումբն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1 Բացահայտել հաճախորդի հետ պայմանագիրը;

2 Բացահայտել կատարման պարտականությունները: Կատարման պարտականությունը երաշխիք է, որ պայմանագրով նախատեսված ապրանքը կամ ծառայությունը կփոխանցվի հաճախորդին;

3 Որոշել գործարքի գինը: Գործարքի գինն այն գումարն է, որը կազմակերպությունն ակնկալում է ստանալ նախատեսված ապրանքը կամ ծառայությունը հաճախորդին փոխանցելու դիմաց: Եթե պայմանագրով նախատեսված հատուցումը ներառում է փոփոխուն գումար, ապա կազմակերպությունը պետք է ներկայացնի հատուցման այն գումարը, որն ակնկալում է ստանալ նախատեսված ապրանքը կամ ծառայությունը հաճախորդին փոխանցելու դիմաց;

4 Բաշխել գործարքի գինը կատարման պարտականությունների միջև, հաշվի առնելով պայմանագրով նախատեսված յուրաքանչյուր ապրանքի կամ ծառայության առանձին վաճառքի գինը;

5 Ճանաչել հասույթը, երբ կատարման պարտականությունը(ները) բավարարված են, երբ նախատեսված ապրանքը կամ ծառայությունը փոխանցվում է հաճախորդին (այսինքն, երբ հաճախորդը ձեռք է բերում վերահսկողություն ապրանքի կամ ծառայության նկատմամբ): Կատարման պարտավորությունը կարող է բավարարվել ժամանակի ինչ-որ պահի (սովորաբար հաճախորդին ապրանքներ փոխանցելիս) կամ ժամանակի ընթացքում (սովորաբար հաճախորդին ծառայություններ մատուցելիս): Ժամանակի ընթացքում կատարման պարտավորության համար կազմակերպությունը ընտրելու է համապատասխան չափանիշ՝ որոշելու համար, թե որքան հասույթ պետք է ճանաչվի, որպես կատարման պարտավորություն:

4 Հիմնական միջոցներ

Հազար դրամ

	Մեքենաներ և սարքավո-ռումներ	Տրանսպոր-տային միջոցներ	Գրասեն-յակային սարքավո-ռումներ	Այլ	Օգտագործ-ման իրավունքի ձևով ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք						
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	149,609	19,898	73,603	26,101	177,536	446,747
Ավելացում	24,887	-	667	23,371	-	48,925
Օտարում	-	-	-	-	(34,400)	(34,400)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	174,496	19,898	74,270	49,472	143,136	461,272
Ավելացում	200	-	7,904	14,033	104,984	127,121
Օտարում	(47,513)	-	-	(9,816)	-	(57,329)
Տեղափոխված օտարման խումբ	(140)			(9,153)	-	(9,293)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	127,043	19,898	82,174	44,536	248,120	521,771
Կուտակված մաշվածություն						
2022թ. հունվարի 1-ի դրությամբ	50,866	8,030	22,152	10,679	130,038	221,765
Տարվա հաշվարկ	21,705	1,978	9,340	4,734	44,507	82,264
Օտարման հետևանքով դուրսգրում	-	-	-	-	(34,400)	(34,400)
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	72,571	10,008	31,492	15,413	140,145	269,629
Տարվա հաշվարկ	21,594	1,978	7,195	15,246	23,989	70,002
Օտարման հետևանքով դուրսգրում	(28,798)	-	-	(2,549)	-	(31,347)
Տեղափոխված օտարման խումբ	(140)	-	-	(4,756)	-	(4,896)
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	65,227	11,986	38,687	23,354	164,134	303,388
Հաշվեկշռային արժեք						
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	101,925	9,890	42,778	34,059	2,991	191,643
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	61,816	7,912	43,487	21,182	83,986	218,383

Զրո հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցները, որոնք դեռևս օգտագործվում են, կազմում է 179,565 հազար դրամ (31 դեկտեմբերի 2022թ.՝ 36,431 հազար դրամ):
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները վերաբերում են Խմբի գլխավոր գրասենյակի

վարձակալությանը: Վարձակալված գրասենյակի մնացածորդային օգտակար ծառայության ժամկետը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 48 ամիս: Հաշվետու ամսաթվի դրությամբ Խմբի հիմնական միջոցների նկատմամբ սահմանափակումներ չկան:

5 Կանխավճարներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Կանխավճարներ ապահովագրության համար	2,311	2,347
Կանխավճարներ կատարված աշխատանքների համար	26,861	1,900
Այլ կանխավճարներ	603	2,806
	29,775	7,053

6 Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Բանկային հաշիվներ, այդ թվում՝		
Դրամ	3,375	5,941
ԱՄՆ դոլար	48,200	317,034
Եվրո	1,784	-
	53,359	322,975

Բանկային հաշիվները պահվում են հայկական բանկում, որն ունի պայմանագրային գործընկերոջ երկարաժամկետ ռիսկի BB- վարկանիշ:

7 Վարձակալություն

Խմբի վարձակալության գծով պարտավորությունների հաշվեկշռային արժեքները և տարվա ընթացքում տեղաշարժերը ներկայացված են ստորև.

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Մնացորդը տարվա սկզբում	-	10,476
Պայմանագրի փոփոխություն	104,983	
Վարձակալության գծով վճարումներ	(24,177)	(11,642)
Ֆինանսական ծախսի հաշվեգրում	12,135	1,166
Մնացորդը տարվա վերջում	92,941	-

Սկզբնական ճանաչման ամսաթվի դրությամբ վարձակալության գծով պարտավորության նկատմամբ կիրառվող փոխառության միջին տոկոսադրույքը կազմում է 12%:

Վարձակալության գծով պարտավորությունները ներկայացված են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում հետևյալ կերպ.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ընթացիկ	18,672	-
Ոչ ընթացիկ	74,269	-
	92,941	-

Խումբը կնքել է գրասենյակային շենքի վարձակալության պայմանագիր: Բացառությամբ կարճաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների՝ յուրաքանչյուր վարձակալություն արտացոլված է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն:

Ընդհանուր առմամբ յուրաքանչյուր վարձակալություն ունի սահմանափակում, ըստ որի օգտագործման իրավունքի ձևով ակտիվը կարող է օգտագործվել միայն Խմբի կողմից, քանի դեռ առկա չէ ակտիվը երրորդ կողմին տրամադրելու պայմանագրային իրավունք: Վարձակալությունը ենթակա չէ չեղարկման, կամ հնարավոր է դադարեցնել միայն նախատեսված չափով վճարում կատարելու դեպքում: Որոշ վարձակալություններ պարունակում են հիմքում ընկած ակտիվն անմիջապես վարձակալության ժամկետի ավարտին ձեռք բերելու կամ վարձակալության ժամկետը երկարացնելու հնարավորություն:

Վարձակալության գծով վճարներ, որոնք չեն ճանաչվում որպես պարտավորություն

Խումբը կարճաժամկետ վարձակալությունների (12 ամիս կամ ավելի պակաս ակնկալվող ժամկետով) և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների հաշվառման համար որոշել է չճանաչել վարձակալության գծով պարտավորություն: Նման վարձակալությունների համար կատարված վճարները ծախսագրվում են գծային հիմունքով: Ի լրումն, չի թույլատրվում որպես վարձակալության գծով պարտավորություն ճանաչել որոշակի փոփոխուն վճարներ, դրանք ծախսագրվում են կատարման պահին:

8 Սեփական օգտագործման ֆոնդեր

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Մնացորդը տարվա սկզբում	195,359	230,866
Սահմանափակ և անսահմանափակ օգտագործման ֆոնդերից փոխանցված	13,000	50,949
Ճանաչված եկամուտ	(71,111)	(86,456)
Մնացորդը տարվա վերջում	137,248	195,359

9 Սահմանափակ և անսահմանափակ օգտագործման ֆոնդեր

Սահմանափակ եկամուտները ստացվում են նվիրատվություն անելու նպատակով և նախատեսված չեն Խմբի ընդհանուր օգտագործման համար: 2023թ. ստացված շնորհների և նվիրատվությունների գծով ճանաչված եկամուտը կազմում է 716,248 հազար դրամ (2022 թ.՝ 909,637 հազար դրամ): Սահմանափակ օգտագործման ֆոնդերի գծով եկամուտները 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում են 1,733 հազար դրամ (2022 թ.՝ 5,010 հազար դրամ):

Սահմանափակ և անսահմանափակ օգտագործման ֆոնդերից ստացված միջոցները ներառում են.

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Հայկական ընկերություններ	54,553	627,506
Օտարերկրյա ընկերություններ	601,447	227,411
Անհատներ	74,981	93,149
	730,981	948,066

10 Կրեդիտորական պարտքեր և պահուստներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Կրեդիտորական պարտքեր	4,841	36,378
Չօգտագործված արձակուրդային օրերի գծով պահուստ	27,056	23,910
Վճարվելիք հարկեր	-	3,084
Այլ	1,599	3,170
	33,496	66,542

Առևտրային կրեդիտորական պարտքերը հիմնականում արտահայտված են ՀՀ դրամով, ունեն 30-60 օր մարման ժամկետ և անտոկոս են: Խումբն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարումը:

Չօգտագործված արձակուրդային օրերի գծով տեղաշարժերը հետևյալն են.

Հազար դրամ	2023թ.	2022թ.
Մնացորդը տարվա սկզբում	23,910	40,749
Տարվա ընթացքում հաշվեգրված	16,734	33,951
Տարվա ընթացքում օգտագործված	(13,588)	(50,790)
Մնացորդը տարվա վերջում	27,056	23,910

11 Վարչական ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հատուցումներ աշխատակիցներին	136,716	102,578
Մաշվածություն և ամորտիզացիա	48,895	86,000
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	63,480	52,004
Գրասենյակային պարագաներ և կոմունալ ծախսեր	17,921	19,131
Մասնագիտական ծառայություններ	21,904	15,717
Բանկային և ապահովագրական ծախսեր	12,879	10,507
Բնակարանի վարձակալություն	13,968	9,312
Փոխարկման ծախսեր	5,407	7,539
Վերկայքի սպասարկում և օնլայն հարթակներ	17,583	7,020
Հանրային կապերի և մարկեթինգային ծախսեր	6,635	6,196
Փոստ և հաղորդակցության ծախսեր	3,642	3,582
Այլ	23,083	42,109
	372,113	361,695

12 Ծրագրային ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հատուցումներ աշխատակիցներին	172,612	294,801
Մաշվածություն և ամորտիզացիա	17,585	-
Մասնագիտական վճարներ և պայմանագրային ծառայություններ	27,509	66,275
Միջոցառումների կազմակերպման ծախսեր	2,584	44,564
Նվիրատվություններ երրորդ կողմին	165,318	34,547
Ճանապարհորդական ծախսեր	9,259	16,024
Հանրային կապերի և մարքեթինգային ծախսեր	14,893	9,000
Լաբորատոր սարքեր և պարագաներ	7,481	7,847
Այլ	3,638	28,815
	420,879	501,873

13 Հանգանակությունների գծով ծախսեր

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հատուցումներ աշխատակիցներին	149,764	85,199
Միջոցառումների կազմակերպման ծախսեր	29,494	51,914
Մասնագիտական վճարներ և պայմանագրային ծառայություններ	2,649	30,932
Հանրային կապերի և մարքեթինգի ծախսեր	4,276	13,390
Ճանապարհորդական ծախսեր	26,708	12,831
Տպագրության ծախսեր	-	7,332
Այլ	6,294	6,902
	219,185	208,500

14 Ընդհատված գործառնություններ

Ըդվանսդ Սոլուշնս Սենտր ՓԲԸ -ի գործառնական շահույթը նախքան օտարման խումբ դասակարգման ամսաթիվը բաշխվել են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Այլ եկամուտ	10,443
Վարչական ծախսեր	(8,748)
Գործառնական շահույթ	1,695
Տոկոսային ծախս	(3,283)
Վնաս մինչև հարկերը	(1,588)
Շահութահարկի գծով փոխհատուցում	2,150
Ընդհատված գործառնություններից տարվա շահույթ	562

Օտարման խմբում ընդգրկված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները խմբավորված են հետևյալ կերպ.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ոչ ընթացիկ ակտիվներ	
Հիմնական միջոցներ	4,397
Ոչ նյութական ակտիվներ	67
Հետաձգված հարկային ակտիվներ	2,303
Ներդրումներ համատեղ ձեռնարկություններում	81
Ընթացիկ ակտիվներ	
Մնացորդներ բանկերում	6,092
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	1,821
Ակտիվներ դասակարգված որպես ընդհատված գործառնություն	14,761
Ոչ ընթացիկ պարտավորություններ	
Ֆինանսական պարտավորություններ SAFE պայմանագրերից	33,292
Պարտավորություններ դասակարգված որպես ընդհատված գործառնություն	33,292

Այս ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ Հիմնադրամի ղեկավարությունը վերջնական որոշում չի կայացրել, թե ինչպես են օգտագործվելու օտարման խմբի ակտիվները:

Ընվանսդ Սոլուշնս Մենտր ՓԲԸ -ի դրամական միջոցների հոսքերը հաշվետու ժամանակաշրջանների համար մինչև դրա օտարումը հետևյալն են.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեություն	2,619
Ներդրումային գործունեություն	(10,285)
Ֆինանսական գործունեություն (ներխմբային փոխառություններ)	11,155
Մնացորդներ դրամարկղում և բանկերում տարվա սկզբում	2,603
Դրամական միջոցներ դադարեցված գործառնություններից	(6,092)

15 Կարևոր հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ենթադրությունները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են պատմական փորձի, ինչպես նաև այլ ցուցանիշների վրա, ներառյալ ապագա ակնկալվող իրադարձությունները, որոնք տվյալ հանգամանքներում համարվում են ընդունելի:

15.1 Կարևոր հաշվապահական գնահատումներ

Խումբն իրականացնում է ապագային վերաբերող գնահատումներ և ենթադրություններ: Այդ հաշվապահական գնահատականները կարող են չհամապատասխանել իրական արդյունքներին: Ստորև ներկայացված են այն գնահատումներն ու ենթադրությունները,

որոնց գծով առկա է ռիսկ, որ հաջորդ ֆինանսական տարում ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները կենթարկվեն էական ճշգրտումների:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետներ

Ղեկավարությունը կատարում է հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատում առնվազն յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում: Եթե հիմնական միջոցների փաստացի օգտակար ծառայության ժամկետները տարբերվեն գնահատումներից, ապա փոփոխությունները կհաշվառվեն որպես հաշվապահական հաշվառման գնահատման փոփոխություն՝ համաձայն ՀՀՄՍ 8-ի «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, հաշվապահական հաշվառման գնահատումների փոփոխություններ և սխալներ»: Այս գնահատումները կարող են էական ազդեցություն ունենալ օժանդակ ֆոնդերում ճանաչված գույքի և սարքավորումների հաշվեկշռային արժեքների վրա:

Վարձակալություններ

Խումբը չի կարող հեշտությամբ որոշել վարձակալության տոկոսադրույքը, հետևաբար, վարձակալության գծով պարտավորությունները չափելիս օգտագործում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը: Լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը այն տոկոսադրույքն է, որը Խումբը պետք է վճարի համանուն ժամկետով և արժեթղթով միջոցներ ձեռք բերելու համար, որոնք անհրաժեշտ են նմանատիպ տնտեսական իրավիճակում օգտագործման իրավունքի ձևով և նման արժեքով ակտիվ ստանալու համար: Հետևաբար, լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը ենթադրում է, որ Խումբը պետք է կատարի վճարում, ինչն էլ պահանջում է գնահատում, երբ դիտարկելի տոկոսադրույքներ չկան: Խումբը գնահատում է լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը հիմք ընդունելով դիտարկելի տվյալներ, ինչպիսիք են շուկայական տոկոսադրույքները՝ առկայության դեպքում: Ընկերությունից պահանջվում է որոշակի գնահատում:

15.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում կատարված կարևոր դատողություններ

Պայմանագրերի վարձակալության ժամկետի որոշում երկարաձգման հնարավորությամբ

Խումբը վարձակալության ժամկետը սահմանում է որպես վարձակալության դադարեցման ժամկետ, եթե ընկերությունը խելամտորեն համոզված է, որ կիրագործի վարձակալության երկարաձգման հնարավորությունը, կամ եթե ընկերությունը խելամտորեն համոզված չէ, որ վաղաժամ չի դադարեցնի վարձակալությունը: Խումբը կիրառում է դատողություն՝ գնահատելու համար, թե արդյոք ողջամիտ է կիրառել երկարաձգման հնարավորությունը:

16 Ֆինանսական գործիքներ

16.1 Էական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3-ում:

16.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներն ըստ կատեգորիաների ներկայացված են ստորև.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ		
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	677	4,628
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	53,359	322,975
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	54,036	327,603

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով պահվող ֆինանսական պարտավորություններ		
Վարձակալության գծով պարտավորություններ	92,941	-
Ֆինանսական պարտավորություններ SAFE պայմանագրերից	-	30,008
Այլ կրեդիտորական պարտքեր	31,897	60,288
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	124,838	90,296

17 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Խմբում ռիսկի կառավարման ուղղությունները ներառում են ֆինանսական ռիսկերը, գործառնական և իրավական ռիսկերը: Ֆինանսական ռիսկը ներառում է շուկայական, պարտքային և իրացվելիության ռիսկ: Ֆինանսական ռիսկերի կառավարման գործառույթի առաջնային խնդիրն է սահմանել ռիսկերի սահմանաչափեր և ապահովել վերջիններիս ենթարկվածությունը: Գործառնական և իրավական ռիսկերի կառավարման գործառույթները նպատակ ունեն ապահովելու ներքին քաղաքականության և ընթացակարգերի պատշաճ գործունեությունը՝ նվազագույնի հասցնելու գործառնական և իրավական ռիսկերը:

Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Ֆինանսական գործիքների օգտագործման ընթացքում Խումբը ենթարկվում է շուկայական ռիսկի, հատկապես՝ արտարժութային ռիսկի, տոկոսադրույքային ռիսկի, որոնք բխում են ինչպես գործառնական, այնպես էլ ներդրումային գործունեությունից:

Արտարժութային ռիսկ

Խումբը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Խմբի գործարքների հիմնական մասն իրականացվում է հայկական դրամով: Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է արտարժույթով ստացված նվիրատվություններից, որոնք հիմնականում արտահայտված են ԱՄՆ դոլարով:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Խմբի զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի 10% (2022թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2022թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2022թ.՝ 10%):

Դրամի արժեզրկումն ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ 10%-ով (2022թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը:

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն	
	2023թ.	2022թ.
Շահույթ կամ վնաս	(4,769)	(31,653)

բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Խումբը կարող է ֆինանսական կորուստներ կրել: Խմբի պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և դրանց համարժեքները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Խմբի պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է դրանք բարձր վարկանիշ ունեցող ֆինանսական հաստատություններում պահելու միջոցով:

Առևտրային դեբիտորական պարտքեր

Խումբը բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար կիրառում է ՖՀՄՄ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ:

գ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորվածությունները:

Խումբը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ դրամարկղում և բանկային հաշիվներում պահելով բավարար միջոցներ, ինչպես նաև պահելով բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ գործառնական պարտավորությունները ժամանակին մարելու նպատակով:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է Խմբի ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների գծով պայմանագրային մնացյալ մարման ժամկետները: Աղյուսակը պատրաստված է ֆինանսական պարտավորությունների չզեղչված դրամական միջոցների հոսքերի հիման վրա՝ հաշվի առնելով ամենավաղ ամսաթիվը, երբ Խումբը ստիպված կլիներ մարել այդ պարտավորությունները:

Աղյուսակը ներառում է տոկոսների և մայր գումարի գծով դրամական միջոցների հոսքերը:

2023թ.	Անտոկոս	Պարտավորություն ֆինանսական վարձակալության գծով	Ընդամենը
Մինչև 6 ամիս	4,841	13,298	18,139
6 ամսից մինչև 1 տարի	8,117	13,298	21,415
Ավելի քան 1 տարի	18,939	89,178	108,117
	31,897	115,774	147,671

2022թ.	Անտոկոս	Պարտավորություն ֆինանսական վարձակալության գծով	Ընդամենը
Մինչև 6 ամիս	36,378	-	36,378
6 ամսից մինչև 1 տարի	57,202	-	57,202
	93,580	-	93,580

Խումբն իրացվելիության ռիսկի գնահատման և կառավարման ժամանակ հաշվի է առնում ֆինանսական ակտիվներից ակնկալվող դրամային հոսքերը, մասնավորապես՝ դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը: Խմբի դրամական միջոցները և առևտրային դեբիտորական պարտքերը գերազանցում են անհրաժեշտ դրամական արտահոսքերը: Առևտրային և այլ դեբիտորական պարտքերից դրամական հոսքերը պայմանագրով ենթակա են ստացման 12 ամսվա ընթացքում:

18 Պայմանականություններ

18.1 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

19 Կապակցված կողմեր

Կողմերը սովորաբար համարվում են կապակցված, եթե կողմերը գտնվում են ընդհանուր վերահսկողության ներքո կամ եթե կողմերից մեկն ունի մյուս կողմին վերահսկելու ունակություն կամ կարող է էական ազդեցություն կամ համատեղ վերահսկողություն իրականացնել մյուս կողմի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Յուրաքանչյուր հնարավոր կապակցված կողմի հարաբերությունները դիտարկելիս ուշադրություն է դարձվում հարաբերությունների էությանը, այլ ոչ թե միայն իրավական կողմին:

Կապակցված կողմերի միջև գործարքները չեն կարող լինել նույն պայմաններով և գումարով, ինչ չկապակցված կողմերի միջև: Ղեկավարությունը գտնում է, որ Խումբն ունի համապատասխան ընթացակարգեր՝ կապակցված կողմերի հետ գործարքները բացահայտելու և պատշաճ կերպով ներկայացնելու համար:

Խմբի կապակցված կողմերը ներառում են մայր ընկերությունը, դուստր ընկերությունները (առանձին ֆինանսական հաշվետվությունների համար), ասոցիացված ընկերությունները և համատեղ ձեռնարկությունները, խորհրդի անդամները (տե՛ս ծանոթագրություն 1) և հիմնական ղեկավար անձնակազմը:

19.1 Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հաշվետու տարվա ընթացքում Խմբի և իր կապակցված կողմերի միջև իրականացվել են հետևյալ գործարքները.

Հազար դրամ Գործարքներ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ստացված նվիրատվություններ	71,982	285,768
Ստացված ծառայություններ	2,511	-

Հաշվետու ամսաթվերի դրությամբ մնացորդներ չկան:

19.2 Գործարքներ ղեկավարության և նրանց անմիջական ազգականների հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը տարվա ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը.

Հազար դրամ	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Աշխատավարձ և պարգևատրումներ	216,887	219,747
Այլ հատուցումներ (բնակարանային վարձավճարներ)	13,968	9,312
Մնացորդներ		
Չօգտագործված արձակուրդային օրերի գծով պահուստ	12,526	10,001

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 06.08.2024 11:22